



“ՓՈՂ ՏՈՒԷՔ ՄԱՆՔ ՏՂՈՅԸ ՈՐ ԻՆՏԻ ԳԱՆ.” ԳՈՒԳ. ԺԲ. 46.

ՀԱՏՈՐ Լ.

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ, ՅՈՒԼԻՍ 1, 1901

ԹԻՒ 7

ՍԱՄՓՍՈՆ

Սամիսոնի պատմութիւնը օրինակ մըն է ֆիզիքական մեծ ոյժի և բարոյական մեծ տկարութեան: Բայ ի Սամիսոնի հրաշալի ոյժէն՝ զմայլելու շատ քիչ բան կ'երևնայ անոր վրայ: Եւ սակայն անիկա ճիշդ այն մարդն էր որ իսրայէլը պիտի պահէր սաստիկ յուսահատութենէ՝ փղշտացւոց իշխանութեան ներքեւ, և պիտի պատրաստէր իսրայէլը այն կատարեալ փրկութեան որ եկաւ Դաւիթի օրերը: Սամիսոնի ոյժը գերբնական էր, և ան կորանցուց իր ոյժը երբ կտրուեցան իր մազերը, ոչ թէ անոր համար որ իր ոյժը մազերուն մէջ էր, այլ անոր համար որ իր մազերուն կտրուելովը կ'աւրուէր ըրած ուխտը, վասն զի ուխտաւոր էր, ուստի Աստուած առաւ անոր ոյժը: Դուք ամենքդ կարգացած էք Սամիսոնի ոյժին զարմանալի գործերը, և կը հասկնաք այս պատկերին ինչ ցուցնելը, նաև Սամիսոնի հանելուկին նշանակութիւնը, կարգալով Դատ. ԺԳ. գլուխը: Սամուէլ, ուրիշ երևելի ուխտաւոր մը, որ կը յեշուի Հին կտակարանին մէջ, և որ թերևս Սամիսոնի մահէն առաջ ծնաւ, շատ տարբեր մարդ մըն էր: Սնոր ոյժը մաքուր կեանքի մը և իմաստուն ու մաքուր հոգիի մը ոյժն էր: Շատ տղաք որ կը կարգան այս յոդուածը, պիտի ուզեն Սամիսոնի պէս ուժեղ ըլլալ: Բայց աւելի վսեմ է Սամուէլի պէս բարի ըլլալ:



ԼԱԻԱԳՈՅՆ ՊԱՏՐԱՍՏՈՒԹԻՒՆԸ

Ապագային համար լաւագոյն պատրաստութիւնը անոր վրայ մտածելը չէ, ոչ ալ անոր համար կանուխէն գաղափարներ ձևացնելը, հապա օրուան գործը մեծ ուշիմութիւնով և զգայուն

խղճով կատարելը: Դպրոցական ազան չպատրաստուիր մտրդկութեան գործերուն և պատասխանատուութիւններուն՝ շարունակ մտածելով այն բաներուն վրայ զորոնք պիտի ընէ երբ


մարդ ըլլայ: Այդէկ է որ շատ քիչ մտածէ անոնց վրայ, և իր զօրաւոր խորհուրդը նուիրէ գործին, խաղին և զբօսանքին որ կ'ունենայ այդ վայրկեանին: Անիկա կ'ունենայ իր փախաք-

ները, ինչպէս ամէն մտացի տղայ կ'ու-
նենայ: Եւ ապագան կը ներկայանայ
անոր՝ հազարաւոր անտեսանելի նշան-
ներով և հազարաւոր անլուրի ձայնե-
րով, որոնց իր սիրտը և երևակայու-
թիւնը կը պատասխանէ շարունակ-
բայց ապագան չէ այն որուն վրայ
պարտի մտածել տղան, այլ՝ ներկան:
Ով որ իմաստութեամբ կը մտածէ
ներկային վրայ և աղէկ կը գործած
զանկա, յոյժ իմաստու-
թեամբ մտածած կ'ըլլայ ա-
պագային վրայ և լաւա-
գոյն կերպովը գործածած
կ'ըլլայ ներկան, վասն զի ա-
պագան ներկային զարգա-
ցումը, այսինքն հասունցած
վիճակն է: Իմաստուն երկ-
րագործը շատ քիչ ժամա-
նակ կու տայ իր հունձքին
վրայ մտածելու երբ պէտք
է սերմ ցանել: Անոր աւ-
բող ընելիքն է սերմը հողին
ներքև դնել, որչափ կարելի
է ամենէն աղէկ կերպով, և
որչափ կարելի է ամենէն
աղէկ խնամքը տանելով:
Որչափ աղէկ որ կարենայ ը-
նել այս բանը, ապագան
այնչափ աղէկ կը բովանդա-
կէ իր ամէն օրուան գոր-
ծին մէջ:

Ապագային համար լաւա-
գոյն պատրաստութիւնը, ըլ-
լայ թշուառութիւն, փոր-
ձութիւն կամ գործ, է ընել
կատարելապէս և զուար-
թութեամբ այն գործերը որ
կ'իյնան մեր ձեռքը օր ըստ
օրէ: Ահա այս կերպով կը
կատարուին ամենէն մեծ
գործերը, այս մեթոտով
ազնուագոյն նկարագիրները
կը կազմուին, այս կերպով
իմաստուն անձինք իրենք-
զիրենք կը կրթեն կեանքին
համար: Ով որ ինքզինք բո-
ւրովին կու տայ երկինքի
վրայ մտածելու և երջանկու-
թեան վրայ երևակայելու
չկրնար ընել (երկինքի համար այն
պատրաստութիւնը որ կու գայ ըն-
դունելով կեանքին դաստիարակու-
թիւնը, որ միակ ապահով խոստումն
ու գրաւականն է երկինքն ստանալու:
Մենք պէտք է որ՝ երկինքը մեր ներ-
սիդին ստեղծենք՝ երկինք երթալու
յարմար ըլլալէ առաջ:

ՄԵՌՆԵՒԱԿԱՆ ԿԱՌՔ ՄԱՆՏԱՒԵՐ ՄԷՋ
Պիրմանիա կորսնցուց իր անկա-
խութիւնը՝ Անգղիոյ հետ երեք
անգամ պատերազմելով: Այս պա-
տերազմներուն առաջինը վերջա-
ցաւ 1826ին, երբ Պէնկալայի եզեր-
քը գտնուող երկայն նեղ գետին մը
Անգղիացուց թողուեցաւ: Երկրորդ
պատերազմին վերջացած ատենը,
1853ին, Անգղիացիք իրենց ստացուած

Թագաւորութեան շնջումը: Մանտալէ
երեք մըն հեռու է Իրաուատի գե-
տէն, բայց ջրանցքը որ գետին ջուրը
քաղաք կը բերէ, 16 մըն երկայնու-
թիւն ունի, ինչու որ հարկ էր ծուռ
ընթացքներով շինել ճամբան: Պիր-
մանիոյ թագաւորութեան օրերը Ման-
տալէ շրջապատուած էր թանձր պա-
րիսպներով, և պալատը և Պուտա-
յական տաճարները շատ շողողուն
էին ոսկիով պատած և պայ-
ծառ գոյներով զարդար-
ուած: Այս պատկերը կը
ցուցնէ թէ Պիրմանացուց
մէջ մեռեալի յուղարկաւո-
րութեան հանդէսները ա-
ռիթ են մեծ ցոյցերու և
չքեղութեան, ինչպէս են
Չինացուց մէջ, բնական է
մեղի համար փափաքիլ որ
մեղմէ բաժնուած մեր սի-
րելիներուն համար վերջին
արարողութիւնները, գործը
կրնանք կատարել, այնպէս
ըլլան որ անոնց պատիւ բե-
րեն և ցուցնեն մեր սէրն
անոնց նկատմամբ և մեր
կորուստին մեծութիւնը: Ա-
սիկա վայելուչ զգացում
մըն է, երբ ծայրայեղու-
թեան չտարուիր: Եւ սա-
կայն գիտենք թէ մեր բա-
րեկամները գերեզման չեն
գրուիր: Անոնք իրենց փտող
մարմինները միայն թողած
են իրենց ետևը: Գիտենք
նաև թէ անոնք պիտի չու-
ղէին որ մենք մեր կարո-
ղութենէն վեր ծախքեր ը-
նենք յիշատակարանի և
կամ սուգի հանդերձնե-
րու համար:



ԱՂՔԱՏՆԵՐՈՒՆ ԶՐՀՈՐԸ

Ազորեան Կղզիներուն մէջ
Ֆայալ գեղեցիկ կղզին կայ
իր գեղեցիկ նարնջենիւնե-
րով և առատ ծաղիկներով:
Բայց թէպէտ պատուական
պտուղներ և ծաղիկներ կան
հոն, բանի մը սաստիկ կարօտը կը քա-
չեն այն տեղ բնակող Ամերիկացիները:
Անուշ պաղ ջուր ըսել կ'ուզենք: Հոն
չգտնուիր լիճ կամ գետ, ինչպէս ու-
նինք մենք մեր երկրին մէջ, ուստի
բնակիչները ստիպուած են անձրևջուր
գործածել, զոր կը հաւաքեն խոշոր
ամաններու կամ ջրամբարներու (սար-
նիճ) մէջ: Կղզիին մէջ կը գտնուին քա-

ներուն կցեցին ֆէկու, հարաւային
գաւառը, Պիրմանիոյ ամենէն բարե-
բեր մասը: Երրորդ պատերազմը տևեց
1884էն մինչև 1888, և անոր վերջա-
ցած ատենը ամբողջ Պիրմանիա բրի-
տանական պետութեան կցուեցաւ:
Մանտալէ քաղաքը Պիրմանիոյ վերջին
մայրաքաղաքն եղաւ որ այդ պատ-
ուաւոր դիրքը պահեց 1860էն մինչև

նի մը ջրհորներ, որոնք, որովհետև իրենց ջուրը կը բարձրանայ և կը ցածնայ երկու անգամ ամէն քսանըչորս ժամու մէջ, «Մակընթացութեան և տեղատուութեան ջրհորներ» կը կոչուին: Բայց ժամանակաւ, ասկէ շատ տարիներ առաջ, բնակիչները ոչ ջրամբար ունէին և ոչ ջրհոր, և ստիպուած էին ջուրը առնել ժայռերու խոռոչներէն: Հետեւեալն է առաջին ջրհորին պատմութիւնը:

1699ը անանկ տարի մըն էր որ անձրև գրեթէ չեկաւ: Յորենը չբուսաւ, կովերն ու ոչխարները մեռան ծարուածէնէ, նաև աղքատներն շատը: Արդ, շատ հարուստ մարդ մը կար կղզիին մէջ, որ շատ տարիներ առաջ հոն գացած էր աշխարհի ուրիշ մէկ կողմէն: Այս մարդը թէպէտ շատ հարուստ էր և շատ բարեք կըրնար ընել իր ստակով, սակայն այնչափ կծծի և ժլատ էր, որ բնաւ սիրելի չէր ժողովուրդին: Բայց իր արծաթի և ոսկիի տաղարկները ջուր չէին կրնար գնել իրեն համար, և վերջապէս ասնկ խորհուրդ մը եկաւ միտքը. «Ես ջրհոր մը կը փորեմ ինչպէս կը փորուի իմ երկրիս մէջ. իմ հողիս վրայ կը փորեմ, և ինձմէ գատ ուրիշ մէկը անկէ պիտի չառնէ, կաթիլ մը անգամ:» Ուստի մարդիկ վարձեց և ջրհորը փորել տուաւ, բայց փորող գործաւորներուն քիչ ստակ կու տար և շատ ամարդութիւնով կը վարուէր անոնց հետ: Անոնք փորեցին ու փորեցին, բայց ջուր չեկաւ: Վերջապէս ըսին մարդիկը թէ ա՛լ պիտի չփորեն, բայց միայն սա պայմանով որ մարդը խոստանայ իրենց տալ ջուրէն մաս մը: Եւ հարուստը խոստացաւ որ անոնք գործածեն ջրհորը ամէն օրուան կէսին մէջ: Հիմա անոնք աւելի համբերութեամբ կը փորէին, և առաւօտ մը կէս գիշերէն վեց ժամ ետքը, յանկարծ ելաւ ջուրը: Անոնք պահանջեցին որ ջրհորը գործածեն օրուան առաջին վեց ժամերուն մէջ, և մարդը չհամարձակեցաւ չէ ըսել: Մինչ կը քաջէին ջուրը, մարդիկը տեսան որ ջրհորը երթալով կը ցածնար, և վեց ժամ անցնելէն ետքը, կէս օրին, երբ հարուստը պիտի քաջէր ջուրը, ջուր մնացած չէր: Մարդը սաստիկ բարկացաւ, և ըսաւ թէ ա՛լ երբեք նորէն գործ պիտի չտայ այն մարդոց: Բայց այդ գիշեր, կէսօրէն վեց ժամ ետքը, անոնք նորէն պահանջեցին գործածել ջրհորը: Մարդը ծաղրական կերպով հարցուց թէ կը սպասէին որ ջուր պիտի գա՞ր իրենց հա-

մար և ոչ թէ իրեն համար: Սակայն անոնք ջրհորը գացին, և հարուստը սոսկաց և զարմացաւ տեսնելով որ ահա ջրհորը ջրով լեցուն էր: Կէս գիշերին մարդը նորէն փորձեց ջուր առնել ջրհորէն, և առաջուան պէս դատարկ գտաւ զանիկա: Հիմա վախցաւ, հաւատարով թէ Աստուածային զօրութիւն մը մատ ունէր ջուրին այս ընթացքին մէջ: Եկեղեցի գնաց և ուխտեց Աստուծոյ առջև որ եթէ ջուրը նորէն գայ հետեւեալ առաւօտ, զանիկա աղքատներուն պիտի նուիրէ յաւիտեան: Առաւօտուն, երբ մարդիկ ջրհորը գացին, անոնց կը սպասէր անոյշ ջուրը: Մարդը պահեց իր ուխտը, և այսպէս ջրհորը եղաւ «Աղքատներուն ջրհորը»: Մինչև այսօր ջուրը կը բարձրանայ ու կը ցածնայ քսանըչորս ժամը անգամ մը: Եթէ Գոյալ երթաք պիտի տեսնէք այն ջրհորը:



ՊԱՏ. ՅԱԿՈՒ ԱՊՈՒՀԱՅԱԹԵԱՆ
 Այս արժանաւոր անձին մէկ կարծ պատմութիւնը դրուեցաւ 1899ի թուրքերէն Աւետեբէի 14 թիւին և նոյն տարուան Հայերէն Աւետեբէի 17 թիւին մէջ: Այդ պատմութեան կը հասկնանք թէ անիկա ծնած է Ուհայի մէջ 1839ին, թէ հայրը մեռաւ երբ ան երկու տարեկան էր միայն, և թէ որովհետև հօրեղբայրը գէշ կը վարուէր անոր հետ, անիկա ստիպուեցաւ ինք իրեն հօգ տանիլ կանուխ հասակին մէջ:
 Այսպէս ըրաւ ոստայնանկութիւն (չուլհաճըլըզ) սորվելով, և երբ 14 տարեկան էր, կրնար գոհացուցիչ կերպով հոգալ իր ապրուստը, և արդէն կարգալ սորված էր իր արհեստակիցներէն մէկուն օգնութիւնովը:

Այդ ժամանակէն յստակ տեսնուեցաւ Աստուածային առաջնորդութիւնը: Անիկա ընդունեց Աւետարանական ճամբարութիւնները, և մեծ հայածանք կրեց այդ պատճառաւ: Յետոյ Այնթապ գնաց, ուր աւելի լուսաւորուեցաւ: Այնուհետև Ուհայէ 13 տարի բացակայ գտնուելէն ետքը, որուն մեծ մասն անցուց Պերլին և Պաղէլ, վերադարձաւ իր ծննդեան երկիրը, Ուհայ, ուր իր ներկայութեան շատ պէտք կար: Ուհայի եկեղեցիին հովիւ ձեռնադրուեցաւ 1871ին, և այդ պաշտօնին մէջ մնաց մինչև իր մահը 1893ին: Այցելութիւն մը տուաւ Անգղիա, որու միջոցին 800 Անգլոսկի հաւաքեց մատուռի մը համար, որուն մեծ պէտք կար և զոր շինուած լինցած տեսնելու արտօնութիւնը վայելց 1882ին:

Օրհնեալ ըլլայ Տէրը իր այս հաւատարիմ ծառային օգտակար կեանքին և անոր փառաւոր հանգիստին համար, ուր վստահ ենք թէ մտած է:

ՄԱՔՈՒՐ ՇՐԹՈՒՆՔՆԵՐ
 Տարիներ առաջ սիրելի ծերուկ վարժուհի մը իր հաշուին դպրոց մը բացած էր քաղաքի մը մէջ: Անոր սիրտը մաքուր էր, և ուստի խօսքերը քաղցր էին: Կը սիրէր օրհնեալ փրկիչը, և շատ փափուկ կերպով կը խնամէր անոր փարախին դառնուկները: Այնպէս կ'երևնար թէ փոքրիկ մանուկներու աշխարհին մէջ կ'ապրէր, անոնց հետ ուրախանալով և անոնց հետ վշտանալով: Միշտ կ'ունենար ըսելու հաճելի բան մը, և տալու ծաղիկ մը կամ համբոյր մը, այնպէս որ աշակերտները «Մայրիկին սենեակ» էն ետքը դպրոցը կը սիրէին: Հարկ չկար անոնց «Դպրոց գացէք» ըսելու, անոնք իրենք իրենցմէ ուրախութեամբ կը վազէին հոն, որպէս զի ժամանակ ունենային զանգակին զարնուելէն առաջ վարժուհիին հետ խօսելու: Անգամ մը վարժուհիին սիրտը շատ ցաւեցաւ ըսելով թէ պզտիկ մը աղտողի և անմաքուր խօսք մը հաներ էր բերնէն խաղի ժամանակ: Երբ վարժուհին ստիպուէր պատժել պզտիկներէն մէկը, ընդհանրապէս սովորութիւն ըրած էր զանիկա իր գիրկն առնել, բայց որովհետև Պերճ ինք տարեկան էր, կանչեց զանիկա և ըսաւ որ կայնի իր առջև: Անոր երկու ձեռքերն ալ իր ձեռքերուն մէջ առնելով, և անոր կապոյտ աչքերուն մէջ նայելով, հարցուց, «Այսօր չար խօսքեր հանեցի՞ր բերնէդ, սիրելիս:» Պերճ գլուխը կախեց և, «Ես

«Իշոցք չըրէ» ըսաւ շնչելով : «Տուն կ'երթամ և բոլոր ինչ որ ըսիր կը պատմեմ մորդ :» Պերճ զուխը կախեց և շատ կարմիրեցաւ ու շնչեց : «Ոչ վարժուհի, ինչու որ մօրս սիրտը պիտի ցաւի :» «Իւ դուն մոռցած ես, սիրելի տղաս, թէ Անիկա որ մօրմէջ շատ մը աւելի սուրբ է՝ երկինքէն լուսած է այդ չար խօսքերը, որ քու շրթնունքներէդ ելած են այսօր : Կը վախնամ թէ անմաքուր բան մը կայ սրբաւոր մէջ, Բայց որովհետև ես չեմ կրնար անոր հասնիլ, պիտի աղօթեմ Աստուծոյ որ ինք հասնի քու սրտիդ : Ես կրնամ հասնիլ շրթունքներուդ, և որովհետև շատ վասակ եմ թէ անոնք յարմար չեն Գիշեր բարիի համբոյրը առ մօրդ, ոչ ալ աղօթք ընելու, ես պիտի մաքրեմ զանոնք :»

Այն ատեն վարժուհին իր գրասեղանին վրայէն առաւ բաժակ մը ջուր, պզտիկ կտոր մը օճառ և փոքրիկ սպունգ մը, և հրամայելով Պերճի որ բանայ իր բերանը, աղէկ մը լուաց զանիկա—ակունքերը, լեզուն, շրթունքները և ամէն բան : Այնուհետև կակուղ անձեռոցով (խալլու) մը սրբեց չորցուց զանոնք, նաև լուաց անոր արցունքով թրջուած երեսը, որուն վրայ ներողութեան համբոյր մը դրոյմեց :

Այս պարզ պատիժը, և զանիկա տուող վարժուհին զգացած ճամբրիտ վիշտը խոր տպաւորութիւն ըրին բոլոր աշակերտներուն վրայ : Պերճ հիմա գրեթէ չափահաս մարդ եղած է, բայց այդ օրէն հետէ բնաւ անմաքուր խօսք մը ելած չէ անոր շրթունքներէն : Այսպիսի խօսքերու վրայ խորհած ատենը անգամ իրեն այնպէս կու գայ թէ օճառին համը կը զգայ, և թէ նորէն կը լսէ իր առաջին վարժուհիին 'այն մեղմ' յանդիմանութիւնը :



ԱԶՆԻԻ ԱՆՁՆԱՆՈՒԻՐՈՒԹԻՒՆ ՄԸ

Անգղիերէն հանդէսի մը մէջ պատմութիւն մը կայ մարդու մը, որ իր պարտականութեան հաւատարիմ մնաց ամենէն մեծ փորձութեան մը մէջ որ կրնար գալ իր վրայ : Ուէսթմինսթըրի Արքայադանին շիրիմներէն մին այցելուներէն շատին անձանութ անուն մը կը կրէ, որոնք լռիկ և ակնածանքով կը կենան աշխարհահռչակ մարդոց մէկուն շիրիմին առջև : Շիրիմին վրայի անունը ձերէմայա Հորքոսինն է : Անիկա ծնաւ 1619ին ատենները, դաստիարակուեցաւ Բէյմպրիճ, հոգևոր պաշտօնեայ ձեռնադրուեցաւ, և եղաւ Ժողովրդապետ Հըրի (Անգղիոյ Եորքչիր նահանգ) : Բայց այս քսանամեայ տղան հասարակ Ժողովրդապետ մը չէր : Իր մատող հասակին մէջ հիւնալի յառաջդիմութիւն ըրած էր մաթեմատիկայի և աստղագիտութեան մէջ, և ամէն վայրիկեան զոր կրնար խնայել իր ուսումներուն կու տար : Ուստի ըրաւ զիւտ մը, երևութապէս անհաւատալի այսպիսի դեռատի գիտնականի մը համար, վասն զի իր հաշիւները առաջնորդեցին զինք զուշակել Արուսեակին անցքը, զոր մինչև անգամ մեծն Բէյմպրիճ գուշակած չէր իր գիտը հաղորդեց իր բարեկամին, Ուիլեմ Բրեյպիթի, և 1639 Նոյեմբեր 24ին, երկուքը ըրին իրենց զընտրութիւնները : Այս էր առաջին զննութիւնը որ երբեք եղաւ Արուսեակի անցքին համար : Անցքը պատահեցաւ կիրակի օր, և ձերէմայա Հորքոս զանիկա զննելու համար՝ միայն կրօնական պաշտօններուն մէջտեղ ունէր ժամանակ : Գիտեց մինչև պաշտօնին ատենը, երբ զննութիւնը թողուց, խորհեցաւ թէ անցքը անուշտ պաշտօնին ժամանակը տեղի պիտի ունենայ : Բայց տեղի չունեցաւ մինչև որ Ժողովրդապետը չլիբադարձաւ : Եւ զննութիւնը յաջողեցաւ :

ՄՕՅԻՍԻ ՀԱՆՆԼՈՒԿԻՆ ՊԱՏԱՍԻԱՆԸ

Է	Գ	Ղ	Ն	Ն
Մ	ա	ս	փ	Ա
Մ	Վ	ա	Բ	
Ա	Մ	ա	Ն	Ա
Ն	ա	Թ	ա	Ն
Ա	Է	Ր	Լ	Ն
Մ	Է	Ղ	Ն	Ի
Ե	Ղ	Ի	Ե	Է
Թ	Ն	Բ	Է	Լ

Լուսեցին, Կ. պրիս.— Ն. Հ. Բաշտան, Յովսէփ Պարութեան, Արմենահի Գրեգորեան, Վերդին Կիրակոսեան, Տերուհի Յակոբեան, Եղիսաբեթ Հ. Փաշտան, Վահան ձ. Թովմասեան, Ե. Ս. Գաբրիէլեան, Ա. Մ. Միսասեան, Պրուսա.— Նուարդ Բիւֆէլեան, Եսթեր Խարճիկեղէլեան, Մաթիւս Պաղտատարեան, Ոթթօ Պաղտատարեան,

Էմմա Պաղտատարեան, Պարտիզակ.— Եղիսէ Մ. Այսնեան, Օրտու.— Արշալոյս Տէր Գալուստեան, Մարտուն.— Սերաշահ Ճամճեան, Լուսնիքազ Տ. Իրատեան, Արուսեակ Հ. Գաղապէսեան, Արմենիցա Հ. Գաղապէսեան, Փյայլածա Ս. Պապանիսեան, Կիւլմիս Գ. Պետրոսեան, Մալաթիա.— Արմենակ Տէօփէթեան, Յովհաննէս Գ. Գաւթեան, Միհրան Մ. Թերիսեան, Պետրոս Կարգալանեան, Տիարպէթի.— Ազաւնի Ճարճիսեան, Արուսեակ Թ. Ճարճիսեան, Վիքթոր Ա. Նաճարեան, Պարգեւ Գ. Փափաճեան, Խաչատուր Ա. Անտօնեան, Յովհաննէս Գ. Միթէթէլեան, Սերատարի.— Տիբեան Յ. Պերպէրեան, Նշան Յ. Պերպէրեան, Գեորգ Յ. Պաշտօնեղեան, Նիկոլ.— Գրեգոր Պ. Պողոսեան, Եարգըլա.— Գրեգոր Գ. Ճիբեան, Յովակիմ Կ. Տօղուզեան, Աւետիս Սիվապեան, Կարապետ Արվապեան, Ալպիսեան.— Զարուհի Տ. Յովհաննէսեան, Տարսն.— Ճ. Ս. Հաճընլեան : Կեսարիա.— Արտաշէս Գ. Զամաղապէսեան, Խարբէր.— Սօֆիա Տ. Միլթոնեան, Լուսիա Տ. Միլթոնեան, Մարիամ Տ. Սարգիսեան, Գոհար Տ. Գասպարեան, Սաթիկ Թօթիլեան, Բարբին Ս. Նազգաշեան, Լուսիա Ղազարոսեան, Օղտա ձեռնիկեան, Ալթուն Յովսէփեան, Ազաւնի Ճանիկեան, Վան.— Յովսէփ Մ. Յովհաննէսեան, Յովհաննէս Յ. Զամիլեան, Տիգրան Կ. Ապոզեան, Մ. Աղի.— Տիգրան Միծատուրեան, Սամուէլ Յովակիմեան, Նշան Եմուսեան, Գեորգ Ալվարդեան, Ահարոն Կարապետեան, Տիգրան Յովհաննէսեան, Յակոբ Տէր Ղուկասեան, Երզու.— Սրբուհի Բրուտեան, Մարիամ Մանուկեան, Տիգրանուհի Մոմճեան.— Միհրան Մ. Տէփկանց :



ՀԱՆՆԼՈՒԿԻ ՍՈՒՐԲ ԳԻՐՔԷՆ

*	*	*	*	*	*	*	*	*	*
*	*	*	*	*	*	*	*	*	*
*	*	*	*	*	*	*	*	*	*
*	*	*	*	*	*	*	*	*	*
*	*	*	*	*	*	*	*	*	*
*	*	*	*	*	*	*	*	*	*
*	*	*	*	*	*	*	*	*	*
*	*	*	*	*	*	*	*	*	*
*	*	*	*	*	*	*	*	*	*
*	*	*	*	*	*	*	*	*	*

1. Խոսիւ արգելուած անպաշտութիւն մը :
2. Երուսաղէմի մտ փոքր աղարակ մը :
3. Ռուբէնեանց մէկ քաղաքը :
4. Յուդայի բարեպաշտ մէկ թագաւորը :
5. Աշխարհի վերադարձող քրիստոնեայ մը :
6. Ռիկեբեր երկիր մը :
7. Ամենայն արքայ մը (վերջին գիրը ընդունած) :
8. Նաւու քործիք մը (աջէն ձախ) :
9. Հայ տառ մը :

Այս եռանկէնին ձախակողմեան եղբրքի գերբեր վերէն վար կը կարգացուին երկրի մը անուն : Իսկ աշակողմեան եղբրքի գերբեր վարէն վեր կը կարգացուին Հրէաստանի կառավարի տիրոջ մը :
Վան ՏԻԳՐԱՆ Կ. ԱՊՂՁՅԱՆ

Տարեկան բաժանորդագին 6 դահ. արծաթ, կանխիկ, ամէն տեղոյ համար :

Ամերիկայի Միտինարաց Ընկերութեան կողմէն
Արտօնատէր ձ. Բ. ԿԻՐՆ
Տնօրէն—Սարգիս Հ. Ս. ՊԱՐՆԸՄ

ԿՈՏԱՆԳԻՆՈՒՊՈԼԻՍ
Ի ՏԳՐԱՆԻ Ա. ՅԱՌՈՐ ՊՕՅԱՆԱՆ
Ֆիլիսոսփայութեան Երզու.— Ամերիկան Խան